ԲԱՆՏԱՅԻՆ ԹԵՄԱՆ ՕՐՀԱՆ ՔԵՄԱԼԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. «72-ՐԴ ԲԱՆՏԱԽՈՒՅԸ» ՎԻՊԱԿԸ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Է. Ա.

Օրհան Քեմալը (1914-1970 թթ.) XX դարի թուրքական արձակի ամենահայտնի ներկայացուցիչներից է, որը զգալի դեր է ունեցել ռեալիզմի ուղղության կայացման և զարգացման գործում: Խորհրդային, թուրք և արևմտյան գրականագետների կարծիքով, Օրհան Քեմալի առանձնահատկություններից կարելի է համարել այն, որ նա գրականություն է բերել մի շարք նոր թեմատիկաներ, կերպարներ և հերոսներ, որոնք մինչ այդ կա՛մ ընդհանրապես չեն արծարծվել թուրքական արձակում, կա՛մ էլ ներկայացված են եղել մակերեսորեն: Սակայն ամենակարևորը «փոքր մարդու» կերպարն է, որը գրողի ստեղծագործությունների գերակշիռ մեծամասնության գլխավոր հերոսն է[1]:

1938 թվականը էական դեր ունի Օրհան Քեմալի ճակատագրում, ընդ որում, ինչպես անձնական, այնպես էլ գրական: Այդ թվականին զինվորական ծառայության մեջ գտնվող Քեմալը ձերբակալվում է և դատապարտվում բանտարկության այն բանի համար, որ քննադատել էր թուրքական իշխանություններին՝ հայտնի կոմունիստ բանաստեղծ Նազըմ Հիքմեթին հալածելու և բանտարկելու համար: Հայտնվելով ճաղերից այն կողմ՝ Կեսարիայի բանտում, Օրհան Քեմալը սկսում է ակտիվ ստեղծագործել. նրա գրական առաջին փորձերը չափածո էին՝ բանաստեղծություններ, որոնք տպագրվում էին ստամբուլյան «Յեդի գյուն» ամսագրում՝ Ռաշիդ Քեմալ կեղծանվամբ: Այդ առաջին ստեղծագործությունները իրենց բնույթով ռոմանտիկ էին, արտահայտում էին բանտում գտնվող մարդու հոգեվիճակը և, ինչ-որ առումով, սրանք կարելի է համարել բանտային թեմայի առաջին դրսևորումներ: Որոշ ժամանակ անց նույն բանտ են տեղափոխում նաև Նազըմ Հիքմեթին, և սկսվում են երկու հեղինակների ակտիվ շփումները: Հետագայում Օրհան Քեմալը իր բանտային տարիները բնութագրելու էր որպես «գրական համալսարան». «Օրհնյալ լինի բանտը: Այնտեղ ես հանդիպեցի Նազըմ Հիքմեթին: Այնտեղ ես վերջնականապես ձերբազատվեցի պատրանքներից»[2]: Ավելի ուշ՝ 1965 թ., Օրհան Քեմալը գրում է «Նազըմ Հիքմեթի հետ 3,5 տարի» հուշագրությունը, որտեղ գրողը նկարագրում է բանտում Նազըմ Հիքմեթի հետ իր անցկացրած տարիները, ինչպես նաև գրականության, արվեստի վերաբերյալ իրենց մտորումները[3]:

---

[1] **Фиш Р.** *Хлеб и любовь Орхана Кемаля. Мастера современной прозы. Турция. Орхан Кемаль, М., 1975, с. 6.*

[2] *Նույն տեղում, էջ 5:*

[3] **Kemal O.** *Nazım Hikmet'le Üç Buçuk Yıl, İstanbul, 2000.*

Բանտում անցկացրած տարիներին Օրհան Քեմալը եղել է գողերի, հանցագործների, մարդասպանների և երբեմն անմեղ դատապարտված մարդկանց կողքին, անմիջականորեն բանտային կյանքի և կենցաղի մեջ ու հետագայում այդ ամենը գեղարվեստական գունավորմամբ հանձնել թղթին: Օ. Քեմալի գրականության մեջ բանտային հիմնահարցը զբաղեցնում է ուրույն տեղ. անձամբ իր տեսած, վերապրած բանտային իրականությունը, գրողական դիտողականությամբ հավաքած նյութը հետագայում դարձել են ավելի քան մեկ տասնյակ ստեղծագործությունների թեմա: Դրանք հիմնականում արտահայտվեցին պատմվածքի և վիպակի ժանրերում, որոնցից հատկապես հայտնի է և գրողին մեծ ճանաչում բերեց 1954 թ. տպագրված «72-րդ բանտախուցը» վիպակը: Այդ վիպակը 1967 թ. բեմադրվել ու դարձել է ամենաշատ բեմադրված թատերական ներկայացումներից մեկը Թուրքիայում, և նույն թվականին Օրհան Քեմալին Անկարայի արվեստասերների միությունը ճանաչել է «տարվա լավագույն սցենարիստ»[4]: Իսկ 1987 թվականին վիպակի հիման վրա նկարահանվել է համանուն կինոնկարը:

Այս ստեղծագործության մեջ Օրհան Քեմալը մի կողմից նկարագրում է բանտային դաժան և տխուր իրականությունը, մյուս կողմից՝ սոցիալական խնդիրները, սակայն դրան զուգահեռ կա սյուժետային մեկ այլ ուղղություն՝ գլխավոր հերոսի՝ Կապիտան Ահմեդի ռոմանտիկ սիրո պատմությունը: Ընդհանրապես, Օրհան Քեմալի գրականությունում սիրո թեմատիկան միշտ առկա է, սակայն առավել հաճախ այն ներկայացվում է հետնաբեմում[5]: Դրա արծարծման շնորհիվ սոցիալական ռեալիզմի ուղղության երկերը հագենում են ռոմանտիզմով՝ դադարելով լինել լոկ սոցիալական, կենցաղային խնդիրներ նկարագրող ստեղծագործություններ: Սիրո թեմայի միջոցով գրողը շատ հաճախ փորձում է վեր հանել հերոսների նաև հոգեբանական ներաշխարհը:

Խոսելով իր ստեղծագործությունների հիմնական աղբյուրի մասին՝ Օրհան Քեմալը նշել է. «Ես ռեալիստ գրող եմ, ես ընտրում եմ այն թեմաները, որոնք ամենից լավ գիտեմ»[6]: Շարունակելով այս նույն թեման՝ հավելում է. «Ես գրել եմ իմ իմացած, իմ ճանաչած մարդկանց մասին: Նրանց մասին, որոնց հետ խոսել եմ, ծխախոտ ծխել: Ես այդ մարդկանց ուսումնասիրել եմ»[7]: Ինքնակենսագրական նոթերից մեկում, խոսելով «72-րդ բանտախուցը» վիպակի մասին, Օրհան Քեմալը գրել է. «72-րդ բանտախցի պատմությունը երկար է ապրել իմ ենթագիտակցության մեջ: Հիշողություններն ընկճում էին ինձ: Բազմիցս փորձեցի աշխատել՝ խզբզելով թղթերի մի հսկայական կույտ, սակայն ապարդյուն: Եվ ահա մի գիշեր, երբ տան փայտե պատերը դղրդում էին

---

[4] **Eyigün R. Y.** *Orhan Kemal'in Hayatı, Eserleri ve Orhan Kemal Uyarlamalarının Türk Sinemasındaki Yeri, (Yüksek Lisans Tezi), Mimar Sinan Güzel Sanatlar Üniversitesi, İstanbul, 2006, s. 148-149.*

[5] *Türk Edebiyat Tarihi (edit. Talât Sait Halman), 2-inci baskı, İstanbul, 2007, s. 311.*

[6] **Bezirci A.** *Orhan Kemal – Hayatı, Sanat Anlayışı, Hikayeleri, Romanları, Oyunları, Röportajları, Anıları, İstanbul, 3-üncü basın, 2006, s. 35.*

[7] *Նույն տեղում, էջ 53:*

Բոսֆորից եկող ձմեռային քամուց, ես վերստին սկսեցի գրել: Երբ ավարտեցի վիպակը, արևն արդեն ծագել էր, իսկ սեղանիս դրված բաժակի միջի ջուրը սառցակալել էր: Սակայն ես երջանիկ էի»[8]:

Վիպակի վերնագիրը հեղինակն այսպես է պարզաբանում. «72-րդ բանտախուցը, ինչպես բոլոր բանտերում, այնպես էլ այստեղ ամենաաղքատ և ամենակեղտոտ բանտախուցն էր: Այստեղ մարդիկ ասես ոտքեր ունեցող ճիճուներ լինեին»[9]: Գրողը նկարագրում է, որ այդ խցի բանտարկյալները օրական ստանում էին ցեխանման մեկ սև հաց: Դա, միևնույն ժամանակ, նրանց եկամտի միակ աղբյուրն էր. նրանք կարող էին կա՛մ ուտել այդ հացը, կա՛մ այն վաճառել և հոգալ մյուս կարիքները: Հաճախ կալանավորները վաճառում են իրենց հացի 6 ամսվա պաշարը և դրա դիմաց ստանում ընդամենը 5 լիրա: Օրհան Քեմալը 72-րդ բանտախցի կալանավորների համար կիրառում է "Çdembabalar" («աղքատության հայրեր») արտահայտությունը, որը տարածված էր բանտում:

Նկարագրելով կյանքի հատակում հայտնված և մարդկային շատ հատկանիշներ կորցրած բանտարկյալներին՝ հեղինակը նրանց է հակադրում իր գլխավոր հերոսին՝ Կապիտան Ահմեթին՝ նշելով, որ նա տարբերվում էր մյուսներից: Կապիտանը իր պատվից ցածր էր համարում պայքարել ծխախոտի մնացորդների, մի կտոր սև հացի համար, չէր զբաղվում նաև թղթախաղով և չէր մասնակցում աղմկոտ ու հայհոյանքներով ուղեկցվող վիճաբանություններին[10]: Օրհան Քեմալը փորձում է իր հերոսին հաղորդել փոքր-ինչ ռոմանտիզմ, որը բանտային պայմաններում մի կողմից խորթ, սակայն մյուս կողմից է՛լ ավելի նկատելի է դառնում: Այսպես, նկարագրելով բանտային աղմկոտ և հաճախ ճղճիմ կենցաղը, հեղինակը նշում է. «Կապիտանը սիրում էր լռությունը: Լռությունը և միայնությունը»[11]: Ուստի ստիպված էր լինում սպասել գիշերվան և այդ ժամանակ գամվում էր բանտախցի այն պատուհանին, որը նայում էր քիչ հեռվում գտնվող կանանց բանտին և սկսում էր երազել: Ահա հենց այստեղ է, որ շատ գրականագետների կարծիքով դրսևորվում են Օրհան Քեմալի լավատեսական հայացքները. Կապիտանը, թեկուզ ամենածանր պայմաններում, երազում էր, որ մի օր ի վերջո կազատվի, կգտնի աշխատանք և կստեղծի ընտանիք[12]: Ահա հենց այս հասարակ, բայց հերոսի կարգավիճակի համար անհասանելի ցանկությունն էլ, ի վերջո, դառնալու էր ճակատագրական նրա համար:

Օրհան Քեմալը վարպետորեն է պատկերում բանտային միջավայրը, և շատ արագ ընթերցողը պատկերացում է կազմում բանտային միջավայրի, առօրյայի վերաբերյալ: Դրա համար կարևոր դեր ունեն նաև ժարգոնային խոսվածքի,

---

[8] **Фиш Р.,** *նշվ. աշխ., էջ 15:*

[9] **Kemal O.** *72. Koğuş, İstanbul, 2009, 20. Basım, s. 16.*

[10] *Նույն տեղում, էջ 18:*

[11] *Նույն տեղում:*

[12] *Նույն տեղում, էջ 18-19:*

գոեհկաբանությունների, բանտային բառապաշարի կիրառումը, հերոսներին մականուններով ներկայացնելը և այլն: Հեղինակը խուսափում է ավելորդ մանրամասներով ծանրաբեռնել վիպակը և շատ հաճախ հեռոներին նկարագրում է մի քանի բառով, իսկ մնացածը պարզ է դառնում տվյալ մարդու մենախոսություններից կամ երկխոսություններից: Խորհրդային գրականագետ Ռ. Ֆիշը, խոսելով «72-րդ բանտախուցը» վիպակի և դրանում կիրառված մեթոդների մասին, կարծիք է հայտնել, որ Օրհան Քեմալին հաջողվել է երկխոսություններից և ներքին մենախոսություններից կազմված փոքրիկ վիպակում ներկայացնել մի շարք կարևոր խնդիրներ[13]:

Սկսելով նկարագրել գլխավոր հերոս Կապիտանին՝ հեղինակը որոշակի առանձնացնող կողմեր է պատկերում: Նախ այն, որ նա եղել է նավապետ և բանտում է հայտնվել արյան վրեժի պատճառով, ավելի կոնկրետ՝ սպանել է իր հորը սպանողի հորեղբոր որդուն: Այսինքն՝ ի տարբերություն մանր գողերի, նա արել էր թուրքական հասարակության մեջ հարգի արարք՝ լուծել էր հոր վրեժը: Դրա համար Օրհան Քեմալը նշում է. «Նրան ոչ ոք չէր կարող մանր գողերի շարքին դասել»[14]: Գրողը հերոսին նկարագրելու համար բառեր չի շռայլում. «Ասես գրանիտե անտիկ խեթական արձան լիներ»[15]: Գրքում հեղինակը բարբառային խոսվածքի կիրառմամբ ևս բնութագրիչ կողմեր է հաղորդում գլխավոր հերոսին: Կապիտանի կիրառած բարբառից արդեն պարզ է դառնում, որ նա պետք է լինի սևծովյան շրջանից, և ավելի ուշ է ներկայացվում, որ նա Ռիզեից է: Նրա խոսքում չեն պահպանված թուրքերենին հատուկ ձայնավորների ներդաշնակությունը, երբեմն կիրառում է կասկածելի շարադասություն, որով մի կողմից պատկերում է հերոսի կրթական աստիճանը, մյուս կողմից՝ ուշադիր և գիտակ ընթերցողը հասկանում է, որ Կապիտանը, ամենայն հավանականությամբ, ազգությամբ լազ է:

Երկարատև բանտարկության դատապարտված և անմարդկային պայմաններում ապրող, աշխարհից կտրված հերոսի կյանքում շրջադարձային է դառնում այն, որ Ռիզեի հեռավոր գյուղերից մեկում ապրող մայրը նրան ուղարկում է 150 լիրա: Սա մեծ գումար է լինում 72-րդ բանտախցի չքավոր բոկոտների համար, որոնք կռվում էին ընդամենը 10 դուրուշի (թուրքական մանրադրամ) համար: Գրողը հետաքրքիր է ներկայացնում այն պահը, երբ բանտային գլխավոր հսկիչը Կապիտանին կանչում է իր սենյակ: Մտածելով, որ իրեն կանչում են կա՛մ ինչ-որ վատ արարքի, կա՛մ մատնության հետևանքով՝ Կապիտանը անհանգիստ մտնում է սենյակ: Հսկիչը հարցնում է, թե ով ունի Ռիզեում, ինչին Կապիտանը չի կարողանում պատասխանել: Այստեղ Օրհան Քեմալը, դիմելով իր նախընտրած ներքին մենախոսության մեթոդին, նկարագրում է, թե ինչպես է աշխարհից կտրված բանտարկյալը որոշ

---

[13] **Фиш Р.,** *նշվ. աշխ., էջ 13:*

[14] **Kemal O.,** *նշվ. աշխ., էջ 5:*

[15] *Նույն տեղում, էջ 3:*

ժամանակ մտորելուց հետո նոր միայն հիշում, որ Ռիզեում է ապրում իր տարեց մայրը: «Սկսեց մտովի վերհիշել և պատկերացնել Ռիզեի հեռու, շատ հեռու գյուղերից մեկում ապրող կնճռոտ զառամյալ մորը, որին ինը թե տասը տարի արդեն չէր էլ մտաբերել»[16]:

Ստանալով 150 լիրան՝ Կապիտանը այն հայտարարում է ընդհանուր (բանտային եզրութաբանությամբ՝ «ախպերական փայ») և սկսում գումարը ծառայեցնել բոլոր խցակիցների համար: 72-րդ բանտախցի համար ճոխ սնունդ էր համարվում խաշած լոբին, և երբ Կապիտանը հայտարարում է, որ այդ երեկո ամբողջ խցին հյուրասիրում է լոբի, դա վերածվում է տոնի: Օրհան Քեմալը գրեթե գրոտեսկային մեթոդներով է պատկերում ընդամենը սովորական խաշած լոբու առաջացրած բերկրանքը բանտարկյալների մեջ. «Խուցը տոնում էր, նույնիսկ տոնից էլ ավելին էր այն մթնոլորտը, որը տիրում էր խցում. մարդիկ իրար գրկում, համբուրում էին, ուրախությունից արտասվում...»[17]: Դրանից հետո 72-րդ բանտախցում տեղի են ունենում էական փոփոխություններ, որոնք փոքր-ինչ անհամոզիչ են ներկայացվում ընթերցողներին: Անգամ մարդկանց պահվածքն է փոխվում, օրինակ՝ նկարագրվում է, որ մի քանի օր առաջ ծխախոտի մնացորդի համար պայքարող, խաղացող, աղբարկղերը քրքրող, խոտ ուտողները ասես փոխվել էին, և հեղինակը շարունակում է սարկաստիկ ոճով պատկերել այդ ամենը. «Կեղտոտի (բանտարկյալներից մեկի մականունն է – Խ. Է.) պահվածքը լրիվ փոխվել էր, նա արդեն 150 լիրա ունեցողի ամենամոտ ընկերն էր, աջ ձեռքը»[18]: Այս արագ վերափոխումը չնայած համոզիչ չէ, սակայն գրողը առավելապես ցանկացել է ցույց տալ պայմանների ազդեցությունը մարդկանց պահվածքի վրա:

Վիպակի դիպաշարային կարևոր գծերից է բանտային իրականության անբաժանելի մասը համարվող թղթախաղի նկարագրումը, որը նաև գլխավոր հերոսի ճակատագրում լուրջ դեր է ունենում: Այսպես, Կապիտանի խցակիցներից մեկը՝ Կեղտոտը, համոզում է նրան մասնակցել հարևան խցերում անցկացվող թղթախաղին: Որոշ տատանումներից հետո Կապիտանը սկսում է թղթախաղով զբաղվել, և հաջողությունը ժպտում է նրան, ու կարճ ժամանակում նրա գումարը բազմապատկվում է: Այդ գումարը ևս Կապիտանը ծառայեցնում է ընդհանուր շահերին. 72-րդ բանտախցում միշտ լավ սնվում են, անգամ վերանորոգում են խցի պատերը, տեղադրում պատուհաններ, լույսեր, բանտարկյալների համար Կապիտանը գնում է անգամ անկողիններ: Փոխվում է նաև Կապիտան Ահմեդի կարգավիճակը. արդեն նրան հորջորջում են աղա, նա ունենում է իր անձնական օգնական-աղախինը: Ըստ բանտում գործող չգրված օրենքների՝ Կապիտանը կարող էր տեղափոխվել չքավորների խցից այլ՝ ավելի բարեկարգ խուց, սակայն նա շարունակում է մնալ բոկոտն չքավորների խցում՝ փորձելով փոխել պայմանները: Սակայն ձեռք բերած գումարը

[16] Նույն տեղում, էջ 7:
[17] Նույն տեղում, էջ 19:
[18] Նույն տեղում, էջ 26:

Կապիտան Ահմեդի մեջ է՛լ ավելի է խորացնում և իրատեսական դարձնում իր տարիների երազանքը՝ ստեղծել ընտանիք, և մի օր դուրս գալով բանտից՝ կարգավորել իր կյանքը: Բանտային խարդախներից մեկը՝ Բոբին, շահագործելով Կապիտանի միամտությունը, արհեստական և կեղծ սիրո պատմություն է ստեղծում, թե իբր դիմացի կանանց գաղութի բանտարկյալներից գեղեցկուհի Ֆաթման հետաքրքրվում է Կապիտանով: Ահա հենց այս կիսաերևակայական կերպարի վրա էլ Կապիտանը կառուցում է իր հուսահատ ապագայի պատրանքները: Օրհան Քեմալը վարպետորեն է ներկայացնում փայլուն ապագայի հույսը առավել առարկայացրած բանտարկյալ Կապիտանի հոգեվիճակը, նրա ապրումները: Իրականի և երևակայականի սահմանների հատումը, բանտային մթնոլորտը շուտով ազդում են նաև Կապիտանի հոգեկանի վրա. նա կտրվում է իրականությունից, ժամերով նստում այն պատուհանի մոտ, որը նայում է կանանց գաղութին, սկսում է վատնել գումարները, այլևս չխաղալ թղթախաղ և շուտով կորցնում ամեն ինչ:

Վիպակի վերջում նկարագրվում է արդեն կիսախելագարված Կապիտանը, որը կրկին հայտնվում է չքավոր վիճակում. նրանից խաբեությամբ խլում են անգամ շորերն ու կոշիկներ, իսկ նրան աղա հռչակած բանտակիցները արագորեն երես են թեքում նրանից: Կապիտանի այդ կերպարանափոխումը և խելագարումը ինչ-որ չափով արագ է ներկայացված, սակայն, միևնույն ժամանակ, կարելի է դրանում տեսնել գրողի ձգտումը բանտային պայմանների համատեքստում պատկերել դեպքերի շատ արագ զարգացումը՝ նման տրամաբանությամբ:

72-րդ բանտախուցը վերադառնում է իր նախկին վիճակին. չքավոր բանտարկյալները ձմռանը կոտրում և այրում են անգամ պատուհանները, վաճառում անկողինները: Ի վերջո, բոկոտն բանտարկյալների մի մասը չի դիմանում ցրտաշունչ ձմռանը և սառցահարվում, մահանում է: Մի օր բանտապահները գտնում են նաև Կապիտանի սառած մարմինը. նա իր պատուհանի մոտ, ձեռքերը ճաղերին պինդ բռնած, մահացել էր:

Այսպիսով կարող ենք ասել, որ Օրհան Քեմալի «72-րդ բանտախուցը» վիպակը կարևոր դեր է ունեցել XX դ. թուրքական արձակում բանտային թեմայի զարգացման գործում: Ուշագրավ են նաև վիպակի կերպարների հակիրճ, սակայն ընդգրկուն պատկերումները, նրանց հոգեբանական խնդիրները և փոխակերպումները: Բանտային դժնդակ պայմաններում անգամ Օրհան Քեմալը փորձել է ներկայացնել դրականի և լավատեսության որոշ նշույլներ, ինչը, թուրք լրագրող և գրող Ֆիքրեթ Օթյամի կարծիքով, թույլ է տալիս «72-րդ բանտախուցը» վիպակը համարել «լուսավոր ռեալիզմի»[19] օրինակ: Հավանաբար այս նախօրինակներն են պայմանավորել թուրքական արդի մտավոր հասարակության մեջ կատարվող զգալի տեղաշարժերը:

---

[19] **Otyam F.** *Arkadaşım Orhan Kemal ve Mektupları, İstanbul, 2005, s. 103.*

ТЮРЕМНАЯ ТЕМА В ПРОИЗВЕДЕНИЯХ ОРХАНА КЕМАЛЯ: ПОВЕСТЬ “72-АЯ КАМЕРА”

ХАЧАТРЯН Э. А.

Резюме

Орхан Кемаль является одним из самых известных представителей турецкой прозы, творчество которого сыграло значительную роль в формировании и развитии реалистического направления в турецкой литературе. По мнению турецких, советских и западных литературоведов, Орхан Кемаль привнес в литературу ряд новых тем, в частности, тему тюрьмы. Будучи в заключении, О. Кемаль пережил все тяготы тюремной жизни, что нашло отражение в его рассказах и повестях, самой известной из которых является изданная в 1954 г. повесть “72-ая камера”. В ней предствввлены жестокая и мрачная тюремная реальность, социальные проблемы. Вместе с тем в повести присутствует и другая сюжетная линия – романтическая история любви главного героя.

PRISON THEME IN ORHAN KEMAL'S WORKS: “CELL 72”

E. KHACHATRYAN

Abstract

Orhan Kemal is one of the most famous Turkish authors, who played a significant role in the formation and development of realism in Turkish literature. According to Turkish, Soviet, and Western literary critics, it was him who introduced subject of prison into literature. Prison-related life has a special place in Orhan Kemal's literature. Having spent some years in prison, the author who had seen and endured prison reality, could reproduce it with exclusive observation and feature it some of his works. These include stories and novels, such as his best-known novel “Cell 72” published in 1954, which brought fame to the author. In this work, Orhan Kemal narrates the bitter prison reality in parallel with a romantic love story of the main character.